**1518.** *ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, արևելյան ճակատին, 6 տող.*

ԵՍԶՕՐԱՊ
ԿԱՆԵՑԻ
ՍԲԽԱԲ
ԱԷԽԱՆ
ԱՄԱՐԻՆ
ՋԻՔՍ

ԵՍ ԶՕՐՍԱՊ ԿԱՆ[Գ]Ն[Ե]ՑԻ ՍԲ. ԽԱՉՍ
Բ[Ա]Ր[Ե]ԽԱ[Ւ]Ս[Ի] Ն[Ա]ՏԱՐԻՆ Ե.Ի ՔՍ։

**1519.** *ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, արևելյան ճակատին 6 տող.*

ԷՍՎԱՐԴԱ
ՆԵՍԿԱՆ
ԵՑԻՄԲԽ
ԱԲԱԽՍ
ՄԱՏԻՐՈ
ՍԻ

ԵՍ Վ[Ա]ՐԴԱ[Ն]ՆԵՍ ԿԱՆ[Գ]Ն[Ե]ՑԻ ՍԲ. Խ[Ա]Չ[Ս]
ԲԱ[Ր]Է[Խ]Ա[Ւ]Ս ՄԱ[Ր]ՏԻՐՈ[Ս]Ի[Ն]։

**1520.** *ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքրիկ, օրորոցաձև, հյուսիսային կողին կենցաղային տեսարան, արևելյան ճակատին շուռ տված գրերով և աջից ձախ՝ 4 տող.*

ԱՅՍԷ
ՀԱՆ
ԳԻՍՏ
ԷՎԻՆ

ԱՅՍ Է[Է] ՀԱՆ[Գ]ԻՍՏ[Ն] ԷՎԻՆ։[1]

## ԾՈՎԱԿ (ԱՆՑՅԱԼՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ՋԱՂԱԼՈՒ)

*Գյուղի հին անունն անհայտ է, բայց* XI *դարից պահպանված գերեզմանական հուշարձաններն ապացուցում են նրա հին բնակավայր լինելու։ Ներկա գյուղը տեղավորված է փոսի մեջ, այն ժայռերի տակ, որոնցից մեկի վրա կա ուրարտերեն արձանագրություն։ Գյուղի մեջ հին հայկական հուշարձաններ չկան. գյուղամիջի եկեղեցին նոր է, նրա մուտքի բարավորի վրա ներքուստ մնում է կիսեղծ մի արձանագրություն՝ վերջին դարերի ոճի գրերով և անթվական (№ 1538)։ Հնում գյուղը տեղավորված է եղել հարավային կողմի ժայռերի գլխի հարթության վրա, նախաուրարտական բերդ-շենի արևմտյան եզրին, լճափին մոտ։*

*Այստեղ մնում են տնատեղերի և եկեղեցու ավերակներ ու փոքր խմբերով խաչքարեր։ Դրանցից մի խումբը մի շարքի կանգնած 7 խաչքարից է բաղկացած (երևի այդ պատճառով էլ վայրը կոչվում է «Յոթ եղբայր»)։ Բոլորն էլ հնագույն ոճի են։ Մեկի վրա կա փոքր հիշատակագրություն, իսկ մյուսի վրա, բարեբախտաբար, թվականը՝ 1013 (№1521)։ Այդ հին գյուղատեղի հյուսիսային եզրին, գյուղի գլխին, ժայռերից վեր կա մի գերեզմանատուն, ուր կանգնած է մի հին կոթող, բայց արձանագրություններ չկան։*

*Արձանագրություններ ունեցող հուշարձանների երկրորդ վայրը գերեզմանատունն է, որը գտնվում է ներկա գյուղի արևմտյան բարձունքի վրա, հին գյուղատեղի հանդեպ, ցեպի լիճն*

[1] *Հայտնյանն ունի նաև հետևյալ տարբերակը.* Այս է հանգիստ Հանումին, կողակից Միրախինի բիձի Ուձիս (1696), *կարծում ենք, որ մեր 1505-ն է, աղավաղված. «Ազգ. հանդ.»,* XIX, *15։*

առաջացած հրվանդանի վրա: Այստեղ կան եկեղեցու ավերակներ և բազմաթիվ տապանաքարեր ու խաչքարեր, որոնցից հնագույնը նույնպես կրում է XI դարի թվականը՝ 1037 (№1523)։

Մեր ժողովածուում այս գյուղի շրջակայքից ամփոփված են 18 արձանագրություն, որոնցից միայն մեկն է հրատարակված եղել, այն էլ աղավաղված ձևով։

### «ՅՈԹ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ԿՈՉՎՈՂ ՎԱՅՐՈՒՄ

**1521. ԽԱՉՔԱՐ**, մեծ, անզարդ, գլուխը կամար, հավասարաթև խաչը արևմտյան ճակատի վերին մասում. խաչի գլխին և տակին 2 տող.




ԹՎ. ՆԿԲ: (1013).| ՍՈՒՐ[Բ] ՅԱԿՈԲ:

Ծանոթ. ԱԲ. Յակոբ խաչքարի անունն է: Սովորություն կար նաև խաչքարերը կոչել սրբերի անվամբ:

**1522. ԽԱՉՔԱՐ**, մեծ, անզարդ, գլուխը կամար, արևմտյան երեսին մեկ մեծ և մեկ փոքր հավասարաթև խաչեր, կանգնած է նախորդին կից, հյուսիսից խաչի գլխին, 2 տող.

ԱՃՈՂՈՐՄԻ
ԱՄԳԱԳԱՅՀՈԳՈՅՆ

ԱՃ. ՈՂՈՐՄԻ| ԱՄԳԱԳԱՅ ՀՈԳՈՅՆ:

Ծանոթ. ԱՄԱԳԱԳԱՅ անունն անսովոր է, արդյո՞ք ԳԱԳ անունն է միայն և գրչի սխալմունք: Ժամանակակից է նախորդին, XI դար:

### ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

**1523. ԽԱՉՔԱՐ**, մեծ, կանգնած պատվանդանի վրա՝ գերեզմանատան արևելյան եզրին: Երեսին խաչ և չորս անկյուններում փոքր զարդանշեր: Շրջանակները նեղ ու անզարդ են, որոնցից հյուսիսայինի վրա միայն թվականը 2 տող.

Թ Ն
Ձ Զ

ԹՎ. ՆՁԶ: (1037):

**1524. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, օրորոցաձև, հարավային կողին հեծյալ, առջևում մի ձեռքով ձիու սանձը և մյուսով գավ բռնած մարդ, դիմացը հաց և կերակուրի ղնակ. դրանցից վերև շրջանակին 2 տող.

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏԱՄԻՐԻՆ
ԹՎ ՋԻԷ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՄԻՐԻՆ | ԹՎ. ՋԻԷ. (1478):

1525. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, հյուսիսային կողին երեք խորան, մեկի մեջ գավ և հայ, կենտրոնում՝ մարդ, ձեռքին հայց և կողքին գավ. երրորդի մեջ՝ աղեղ, կապարճ, գուրզ և նետ. կողքերի և վերին շրջանակում արձանագրություն, 3 տող.

Հարավային կողին նույնպես երեք խորան, մեջին միայն խաչեր. կողքերի և վերին շրջանակին նախորդ արձանագրության շարունակությունը 3 տող.

ՀԱԳԻՍՏՂՈՒԼԻԾԱՆԻՆՈՐԷՈՐԴ-Է

ԱՅՍ

ՍԱՅՍՊԱՆՎԱՒ

ՁԵՌԱՄԲՏԱՃԿԻՆԻՁՈՐԱԿ-

ԻՆՍԱՏՈՆԱՅԽԱՅՁԻՆ

ԽԼՎԱՐԴԱՆԻՆ

Ի Թ Վ Ջ Ձ Ա

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՂՈՒԼԻԾԱՆԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ԽԼՎԱՐԴԱՆԻՆ. ՍԱՅ ՍՊԱՆՎԱՒ ՁԵՌԱՄԲ ՏԱՃԿԻՆ Ի ՁՈՐԱԿԻՆ ՍԱՏՈՆԱՅԽ[Ա]ՅՁԻՆ. ԹՎ. ՋՁԱ: (1532):

Ծանոթ. Սա տանախաչը շրջանի հյուսիսային սահմանում գյուղ է, որի վրայով է անցնում գետի ներկա Կարմիրի շրջանը և Լոռի հովիտը տանող ճանապարհը:

1526. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, օրորոցաձև, հյուսիսային կողին հեծյալ, պարող մարդ և զավ ու հայ, շրջանակի տակ 3 տող.

ՍԽՉԲՃԱՆՎԱԻՆՈՐԴԻ

ԱՄԻՐԻՆ

ԹՈՒԻՍ

ՍԲ. ԽԱՉ[Ս] Բ[ԱՐ]ՁԽԱԽՍ[Ա] ՃԱՆՎԱԻՆ, ՈՐԴԻ[Ն] ԱՄԻՐԻՆ[Ն]. ԹՎ. ՌԻԵ: (1576):

1527. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, հարավային կողին խաչեր. շրջանակներին 1 տող.

ԵՍՄԻԿԻՉՍԿՆԵՑԻԽՉԳՐՈՐԻՆԹՈՒԽ

ԵՍ ՄԻԿԻՉՍ Կ[Ա]Ն[Գ]Ն[Ե]ՑԻ Խ[Ա]Չ[Ա] ԳՐ[Ի]Գ[Ո]ՐԻՆ. ԹՎ. ՌԽ: (1591):

1528. ԽԱՉՔԱՐ, մեծ, երեսին երկու խորան՝ մեջին խաչեր, քիվին և խաչերի շուրջը 7 տող.

ՍԽԱՉՍԲԱՐԷԽԱՒՍ:ՄԻՐԶԻՆԻՐԿՈՂ

ԻՆ

ԱՅ ԿԻՑ

Թ ՌՀ

Է

ՈՐԴԻ ՄԵՌԱՒ

ՄԻՐԶԱՅ ԿԱԶՄՈՂ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՄԻՐԶԻՆ, ԻՐ ԿՈՂ[Ա]ԿՑԻՆ: ԹՎ. ՌՀԷ: (1628) ՈՐԴԻ ՄԵՌԱՒ. ՄԻՐԶԱՅ ԿԱԶՄՈՂ:

Ծանոթ. Խաչքարը կանգնած է գերեզմանատան հյուսիս-արևելյան եզրին, ուր հինգ կարգից բաղկացած մի երկար և ընդհանուր պատվանդանի վրա անցյալում կանգնած են եղել ութ խաչքարեր, որոնցից մնում է այս մեկը լրիվ և մեկն էլ կիսատ. մնացած վեցի զառարկ անցքերը միայն կան։

Հրատ. Լալայան, XIX, 131 (խիստ աղավաղված)։

**1529.** *ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, տափակ, երեսին ննջեցյալ. սալ, գավ և հաց. երեսին 5 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏՂԱԶԱ
ԻՆՈՐԴԻՄԻ
ՐԶԻՆ
ԹՌՃԻԳ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՂԱԶԱՐ|ԻՆ, ՈՐԴԻ ՄԻ|ՐԶԻՆ.|
ԹՎ.:ՌՃԻԳ: (1674):

**1530.** *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, երեսին կանգնած մարդու պատկեր, սալը ձեռքին, կողքին գավ և հաց, տակին 6 տող.*

ԱՅՍԷՀԱ
ՆԳԻՍՏ
ՄԽԻԹ
ԱՐԻՆՈՐԴԻ
ՂԱԶԱՐԻՆ
ԹՌՃԾ

ԱՅՍ Է ՀԱ|ՆԳԻՍՏ| ՄԽԻԹ|ԱՐԻՆ, ՈՐԴԻ|
ՂԱԶԱՐԻՆ| ԹՎ. :ՌՃԾ: (1701):

**1531.** *ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, տափակ, վրան մարդ՝ ձեռքին հրացան, կողքին գավ և հաց, գտնվում է նախորդների մոտ, վրան 5 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏԳԻՐԱԿ
ՈՍԻՆՈՐԴԻ
ՂԱԶԱՐԻՆ
ԹՌՃԾԲ

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ԳԻՐԱԿ|ՈՍԻՆ ՈՐԴԻ|
ՂԱԶԱՐԻՆ.| ԹՎ. :ՌՃԾԲ: (1703):

**1532.** *ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, տափակ, երեսին քանդակված գութան, զույգ ակներով և երկու լծով, առանց լծկանի և մաճը բռնած մարդ. ծայրին 5 տող.*

ԱՅՍԷՀԱ
ՆԳԻՍՏ
ԱՎԱՔԻՆ
ՈՐԴԻՂԱԶԱՐ
ԻՆ
ԹՎՌՃԾԲ

ԱՅՍ Է ՀԱ|ՆԳԻՍՏ| ԱՎԱՔԻՆ|, ՈՐԴԻ ՂԱԶԱՐ|ԻՆ,
ԹՎ. :ՌՃԾԲ: (1703):

**1533.** *ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, օրորոցաձև. հարավային կողին հեծյալ՝ ձեռքին խաչ, դիմացը պալող. արանքներում 5 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏ
ՊԱՏԱԼԻՆ
ՈՐԴԻ
ՄԱԼԽԱ
ՍԻՆ ԹՎ ՌՃԿ

ԱՅՍ Է ՀԱ|ՆԳԻՍՏ |ՊԱՏԱԼԻՆ|, ՈՐԴԻ|
ՄԱԼԽԱՍԻՆ|: ԹՎ. :ՌՃԿ: (1711):

**1534. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *մեծ, տափակ, երեսին 7 տող.*

ԱՅՍԷՀԱ
ՆԳԻՍՏ
ԷՂԱՅԻՆ
ՈՐԴԻԷԱ
ԼԱԶՊԻՆ
ԹՎՌՃԿ
Բ

ԱՅՍ Է ՀԱ[ՆԳԻՍՏ] ԷՂԱՅԻՆ,] ՈՐԴԻ ԷԱ[ԼԱԶ
ՊԱՐ[ՈՆ]ԻՆ] ԹՎ. :ՌՃԿԲ: (1713):

**1535. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *փոքր, տափակ, երեսին 6 տող.*

ԱՅՍԷՀԱ
ՆԳԻՍՏ
ՍԱՐԽԱ
ՆԻՆՈՐ
ԴԻԷԱԼ
ԱԶԻՆ

ԱՅՍ Է ՀԱ[ՆԳԻՍՏ] ՍԱՐԱԽԱ[ՆԻՆ, ՈՐ[ԴԻ
ԷԱԼ[ԱԶԻՆ:

*Ծանոթ. Նախորդի մոտ է, նույն ընտանիքին պատկանող և ժամանակով մոտ։*

**1536. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *մեծ, տափակ, երեսի կենտրոնում հովվական գավազան և կողքերին 4 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՏՐԲԱՐՍԵՂ
ԻՆ



ԹՎՌՃԿԷ ՂՎԾ
ԷՍՏՐԲԱՍԵՂՉԷՆԱՑՄ̅ԲԵԿԵՂԻ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՏՐ. ԲԱՐՍԵՂ[Ի]Ն. ԵՍ
ՏՐ ԲԱՐՍԵՂ. ՇԻՆԱՑ Մ̅Բ. ԵԿԵՂ[ԵՑԻՆ.
[ԹՎ. :ՌՃԿԷ: (1718):

*Ծանոթ. Եկեղեցու ավերակներ կան գերեզմանատան մեջ, նրա հյուսիս-արևելյան եզրին անտաշ քարերով։*

**1537. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *փոքր, տափակ, երեսին 3 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՍԱՐԳ
ԻՍԻՍՈՐԴԻՀԱՐԱՅՊՏ
ԹՌՃԿԲ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍԱՐԳ[Ի]ՍԻՍ, ՈՐԴԻ
ՀԱՅՐԱՊ[ԵՏ]Ի[] ԹՎ. :ՌՃԿԲ: (1713):

**1538. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ** *եկեղեցու մուտքի բարավորի վրա, ներքուստ 3 տող.*

ԱՍԱ̅
ԱՅՍԻՄԳԻՐՈՐԴԱՆԱՅ
ՈՐԱՐՔՆԱՏԱՍԱԿ

..... |ԱՅՍ Է ԻՄ ԳԻՐ ՈՐԴԱՆԱՅ (ՎԱՐԴԱՆԱ)|
ՈՐ ԱՐՔ ՆԱՀԱՏԱԿ:

## ԱՐԴԱՆԻՇ

*Հուշարձանների մնացորդներից դատելով, այս գյուղը հնում եղել է շատ մեծ. գյուղի զանազան մասերում կանգնած են բազմաթիվ խաչքարեր՝ շինված բնական սալքարերից. երկու տեղում էլ մնում են գերեզմանատների մնացորդներ։ Կալատեղում կանգնած է երկու մետր բարձրությամբ մի գեղեցիկ խաչքար, իսկ տների պատերի մեջ երևում են հին շենքերից վերցրած բազմաթիվ տաշած քարեր։*